գի և 16 մարտի 1798 ամի Կ. Պոլսի Թամբա դեսպանին ուղղուած հրամանագրով կրկնուեցաւ՝ «ամեն կարելի օգնութիւն և պաշտպանութիւն հասցնել Հայոց Հայրապետից՝ Թիւրքիոյ մայրաքաղաքն առաքած եկեղեցական պաշտօնեաներին բոլոր դէպքերում և յամենայնի վարուիլ այն հրովարտակին (23 յունվ. 1781 ամի) համեմատ»:

Այդպէս էր ռուսաց կառավարութեան ընթացքն առ հասարակ Հայ ազգի և 'ի մասնաւորի Հայաստանեայց եկեղեցու վերաբերմամբ. և այդ ընթացքն արտայայտում էին ոչ միայն գահի բարձունքից արձակուող հրովարտակները միայն, հապա և առանձին դէպքերում նոյն իսկ պետական անձինք, ինչպէս որ տեսնում ենք Ղուկաս կաթողիկոսի թղթերից առ վսեմափայլ Պոտեմկին իշխանը, Ռումեանցև կոմսը, Պանին կոմսն և այլն, ուր Հայրապետն այդ թղթերով շնորհակալութիւն է յայտնում նրանց, որ նրանք հովանաւոր են Հայոց ազգին, բարեսէր են դէպի Մայր Աթոռն և բարեկամ ու ձեռնտու իշխան Արղութեան արքեպիսկոպոսին:

Ղրիմի խանութիւնը Թիւրքիայից անկախ հրատարակող Քուչուկ-Կայնարջեան հաշտութիւնից յետոյ ռուսաց պետութիւնը ձեռնամուխ եղաւ մարդաբնակ դարձնել նոր գրաւած Նովորոսիյսկի երկիրը: Կառավարութիւնը յարմար դատեց գաղթեցնել այդ շրջանը Ղրիմի յոյներին ու հայերին և սկսաւ զանազան արտօնութիւններ խոստանալ նրանց, որ յանձն առնեն կայսրութեան սահմանների մէջ բնակուել: Նա հրամայեց «ամեն կերպով յորդորել այն քրիստոնեաներին, որպէս զի մեր կողմը դան, և յուսադրել նրանց, թէ Կայսերական հովանաւորութիւն կըստանան և այն բոլոր նպաստները, որոնք անհրաժեշտ կըլինին սկզբում»: 9 մարտի 1778 թ. Բարձրագոյն հրամանը յանուն վսեմափայլ Պոտեմկին իշխանի պատուիրում էր՝ «ամենայն քաղցրութեամբ ընդունել և ճանապարհի պաշար ու պարէն մատակարարել Ղրիմից գաղթելու յօժարութիւն յայտնող բոլոր յոյներին, հայերին և վրացիներին... որպէս զի այդ նոր գիւղացիք մեր սահմանները ոտք դնելու օրից սկսած ոչ միայն ուտելիքի որև է կարիք չզգան, այլ և Ձեր անօրէնութեամբ բաւարար երկիր ու տնտեսութեան բոլոր պէտքերը մեր գանձարանից ստանան. բայի այդ մենք չենք յապաղիլ կարևոր արտօնութիւններ շնորհել նրանց»: Ղրիմի քրիստոնեայ բնակիչներն, առանց դաւանանքի խտրութեան, յունաց միտրոպո-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան